









120 Ի բազում եւ ի զանազան տեղաց բխէր. եւ վերեւն կայր կոյս գեղեցիկ աղջիկ մի, ունեւրով ծաղիկ ի ձեռնին. եւ ասին թէ հոռոմայեցիքն նախ զայս կինս պաշտէին: Եւ աղբերն երկու կողմն կային պառկած մեծամեծ

125 հսկայք իբրեւ զվիշապ մէրմէրէ, որ ունէին եւ նոքա ծաղիկս ի ձեռս եւ ոտս արմաւենաց, զոր չափեցի միոյն ոտաց բուժն թիզ մի լայնքն էր եւ երկու թիզ երկայնքն. զի եւ զնոսա պաշտել են: Եւ այլ բազում ձիք եւ

130 կերպարանք մարդոց եւ անասնոց կայր: Կին մի էր կոփած մերմէրէ, որ գլուխն քան զկարաս մի էր մեծ: Եւ այս ամէնքս կոսպաշտից մնացել է. եւ դրած էր թէ աստ էր թախտ. եւ աստ նստէին առաջին թագաւորքն եւ կայ-

135 սերքն. զայս ամենայն տեսեալ հիացաք եւ փառս տվաք Աստուծոյ. եւ դարձաք ի տուն:

(Շարունակելի): Հրատարակեց՝ Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ



**ՅՈՎ Հ Ա Ն Ե Ի Ս Ա Յ Վ Ա Ջ Ո Վ Ս Կ Ի**  
**Ճ Ո Վ Ա Ն Կ Ա Ր Ի Զ**

ԻՐ ԿԵԱՆԲԵՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆԻԹԻՒՆԸ

(Շարունակութիւն):

Ե.

ԱՌԱՋԻՆ ՈՍԿԻ ՄԵՏԱԼԸ, ԵՒ ՈՒՂՆԻՈՐՈՒԹԻՒՆ  
ԳԵՊԻ ԻՏԱԼԻԱ (1840)

Առաջին նաւագնացութիւնը որ ըրաւ նկարիչը Ֆինական ծովի վրայ՝ ընդարձակ հորիզոններ բացաւ անոր մշտախոյզ մտքին ու հզօր երեւակայութեան առջեւ: Ծամբու ընթացքին նա յափշտակուած էր իր սիրական տարրի — ծովի այլազան երեւոյթներով ու գունախաղերով: Նա նկատեց իւրաքանչիւր շարժման յառաջադայութիւնը, մթնոլորտի պարզութենէն ու խաղաղութենէն մինչեւ անոր ամպրոպային ու փոթորկայոյզ փիճակները, լոյսի գունախաղերը, ալիքներու մէջ մի կազմաւորումը, յառաջխաղացի բոլոր բարդ ու հոսուն շարժումները, մկաններու գալարումն ու թաւալգլորը, թխացած կոհակին մեծաշառաչ պոթկումը՝ մինչեւ ալիքէ թրջած սեւ ամպերու մոայլութիւնները: Առաջին անգամ հոս է, որ նա սորվեցաւ իր

ջրի երակային հիւսուածքներուն մէջ այնքան բնական ու կենդանի բան մը դնել, բախումի պահերուն մէջ՝ աւելի՛ ճշգրիտ եւ աւելի՛ զօրեղ արտայայտութիւն մը ցոյց տալ, ժայռերու կառուցումին մէջ՝ յաւելեցնել բնութեան վայրի, տոկացող բնոյթը, ու վերջապէս իր արուեստին ու ճաշակին վրայ աւելի բռնանալ՝ պահանջելով իր աշխոյժ երեւակայութենէն աւելի բան մը, քան ինչ որ նա ընծայած էր մինչեւ հիմայ:

Ծովը նկարել ուզողը՝ հա՛րկ է զայն ապրի ա՛յնքան խո՛ր, ա՛յնքան հարազատ, բնածին հակումով մը, մինչեւ որ հասնի անոր իսկական տիրումին: Նկարիչն ըմբռնած էր ծովուն եւ իր մէջ գտնուող կապին անմիջականութեան հրաշագործութիւնը:

Նկարչական բազմալիսի յորինանիւթերով (motif) ճոխացած՝ վերադարձաւ Այվազովսկի Պետերբուրգ, ուր նա վերաբերեցնելով իր ապրած տպաւորութիւնները՝ պատաստի վրայ փոխադրեց շատ միջրական բնավայրեր, ծովափունքի, նաւերու, մթնոլորտի եւ ծովի գեղեցկութիւններ:

Օժտուած հզօր երեւակայութեամբ՝ նա իր աչքին առաջ կը պատկերացնէր բոլորը, իրենց մանրամասնութիւններովն ու հրապոյրով. եւ այդպէս կը ստեղծէր նկարներ՝ բուն թախով, արագ եւ հաւատարիմ:

Նկարիչը միայն ա՛յն ժամանակ պատաստի առաջ կը նստէր՝ երբ մտապատկերն իրականի պայծառութիւնով կը վերածնէր իր ներս: Եւ ահա շարժուած մընթացքին օրերու թիւով ցուցադրութեան հանեց նկարներ: Հակառակ իր արագաշարժութեան՝ անիկա իր պատաստներուն մէջ այնքան հմայք ու լոյս էր սիրած՝ որ վեհափառ կայսրը, Նիկողայոս Ա. աւելի՛ ամբացուց իր նկարչին հետ ունեցած հովանաւորող կապը, եւ անոր «Օղբ Ֆինլանդական ծովի վրայ» նկարին ներութեան ու բնականութեան համար՝ չվարանցաւ տալ ոսկի մետալ մը. (1837):

Ոչ միայն ինքնակալը, այլ եւ արքունիքի բոլոր բարձրաստիճան անձնաւորութիւնները նկարչին մէջ ստեղծագործ մեծ կարողութիւն մը նշմարելով՝ կ'որոշուի որ նա կայսեր հաշուոյն կարող է երթալ գեղարուեստով հարուստ աշխարհներ, «պայծառացնելու թէ՛ իր եւ թէ՛ Ռուսիոյ անունը»<sup>1</sup>:

<sup>1</sup> Ինքնակալն այսպէս արտայայտուած է, վասն զի Այվազովսկի Ռուսիոյ հպատակ էր:

Այվազովսկի առաջին անգամ ճամբորդեց զէպի Իտալիա 1840ին: Նա տակաւին արուեստի հետեւող՝ կը փափաքէր տեսնել ինչ որ ստեղծած էին Ռաֆայէլ, Միքէլ Անջելօ, Լէօնարդօ Գալլինչի եւն:

Նախ այցելեց Վենետիկ, ուր իր եղբայրը Հ. Գաբրիէլ զինքն ողջունեց կարօտի եւ սիրոյ համբոյրով: Միաբանութիւնը դիտցաւ պատշաճ ընդունելութիւն եւ հիւրասիրութիւն զովսկի ծանօթացաւ հռչակաւոր մատենագիր Գոգօլի<sup>2</sup> հետ, որ մաղթեց իրեն յաջողութիւն եւ փառքի օրեր:

Հոս երկար չմնաց նկարիչը: Նա քանի մը քաղաքներ հանդիպելով. ուղղուեցաւ զէպի Հոռոմ: Այստեղ նկարիչն այնքան խոր տպաւորուեցաւ հանճարներու գլուխ-գործոցները տեսնելով՝ որ իր նամակներուն մէջ կը գրէր. «Նայելով հանճարներու արտադրութիւններուն՝ կը զգաս թէ ոչինչ ես. այստեղուան մէկ օրը՝ ամբողջ տարի մը կ'արժէ: Ես մեղուի պէս ծաղկանոցէն մեղր կը ծծեմ, որպէս զի շնորհապարտ՝ հա՛րկ մատուցանեմ թագաւորին եւ մայր Ռուսաստանին»:

Հոռոմ անցուցած իր քանի մը շաբաթները ինչ կէտէն գեղարուեստի հրաշալիքներուն սքանչելի շացումով: Անիկա զգաց թէ ինքը տակաւին ոչինչ է արտադրած՝ համեմատութեամբ այն հանճարներուն, որոնց կոթողական գործերուն միշտ այցելած են աշխարհի հողամասերէն:

Սանդալառուած Իտալական վարպետներու գործերէն՝ նա ձեռք առաւ վրձինն ու երանգապանակը. ինքն ալ ծովերուն գեղեցկութիւնը պիտի ցուցադրէր, որուն շատ ուշադրութիւն չէին դարձուցած այդ պաշտուող արուեստագէտները:

Նկարեց իրարու ետեւէն՝ «Փոթորիկը», «Քառոր», «Նէպոլսոյ գիշերը» եւ ուրիշ տեղական ծովեզրեայ բնավայրեր, որոնք Հոռոմի եւ Նէպոլսոյ նկարահանողներուն մէջ արժանացան ընդհանուր եւ բարձր գնահատման: Իտալացի գեղարուեստասէր ու գուարթ ժողովուրդն ըմբռնեց իսկոյն, թէ իր հողին վրայ հանճարեղ հիւր մ'ունի, հետեւաբար պարտք համարեցաւ Այվազովսկի փառքին շուք դնել՝ երգելով անկեղծ զգածութիւն շուք դնել՝

<sup>2</sup> Նիկողայ Գոգօլ, ուսու բանաստեղծ 1809—1852:

մով անոր արուեստին գերազանցութիւնն ու նկարչին հանճարը<sup>3</sup>:

Այվազովսկի շուրջ միայն ուսմիկ ժողովուրդը չէր որ կը ծափահարէր, այլև ագնուականներ, արուեստագէտներ, գիտնականներ, գրական մեծամեծ գէմքեր ու բարձրաստիճան եկեղեցականներ:

Վերեւ յիշուած երեք նկարներն ա՛յնքան տարածեցին արուեստագէտին համբաւը՝ որ Նէպոլսոյ թագաւորը ուսու գիւնադիտական ներկայացուցչի միջոցով բաղձանք էր յայտնած Այվազովսկին տեսնել, եւ այս առիթով թագաւորն անոր նկարներէն մին գնեց՝ որ կը ներկայացնէր «Նէպոլսական նաւաոր կը ներկայացնէր մեծ հետաքրքրատրմիղ»: Իսկ «Քառոր» մեծ հետաքրքրատրմիղն արթնցուց Վատիկանեան շրջանակին մէջ: Մինչեւ Գրիգոր ԺԶ. ի ներկայացուցչի նկարն անցաւ կարդինալներու եւ եպիսկոպոսներու քննութենէն: Բոլորը, ինչպէս Հոռոմ պատկան ինքը, հիացումով մնացին անոր գեղեցիկ յղացումին առաջ: Այվազովսկի Ս. Գրիգոր այս խօսքն էր տեսանելի ըրած. «Եւ երկիր էր աներեւոյթ եւ անպատրաստ եւ խաւար ի վերայ անդնոց, եւ Հոգի Աստուծոյ չըջէր ի վերայ ջուրը»:

Ահա նկարին ներկայացումը, որ արուեստագէտին ըմբռնումն ու հոգւոյն վսեմութիւնը կը միացնէ իր արուեստի ներութեան: Խաւարչուտ երկնքի խորքէն՝ շեղակի բորբ լոյս մը կը ցոլանայ թոհ ու բոհի վրայ: Լուսաւորութեան մէջ սուր աչք մը կը նշմարէ ուրուագծօրէն տրուած Սաբաովթի կերպարանքը, իբր Հոգի Տիեզերակալին՝ որ խորհրդաւոր շրջան մը կ'ընէ լոյծ տարերքի, անհրաժեշտ էր միայն մը կ'ընէ լոյծ տարերքի, անհրաժեշտ էր միայն մը կ'ընէ լոյծ տարերքի, անհրաժեշտ էր միայն մը կ'ընէ լոյծ տարերքի: Նկարն կազմ, տարտամ ելեկէջներուն վերեւ: Նկարն իր ամբողջութեամբ հրաշալի համեմաշխուտութիւնն է թանձր ստուերի եւ պոթկացող արփիի, երկուքն ալ դաշնաւորուած ալիքներու ծանր ու վսեմ շարժումի ընթացքին հետ:

Այս նկարը նուիրեց Այվազովսկի Սրբազան Քահանայապետին, հրաժարելով ամէն վարձատրութենէ, զոր Հոռոմը պատրաստ էր շտայլօրէն տալ: Գրիգոր ԺԶ. անոր ագնուութիւնը փոխարինեց ագնուագոյն բանով մը. անոր կուրծքէն կախեց մեծ ոսկեմետալ:

Թէ Իտալական մամուլն ի՛նչ կը գրէր Այվազովսկի ցուցահանդէսներուն մասին՝

<sup>3</sup> «Երգելով նրան (Այվազովսկին) ոտանաւորներէ մէջ՝ ընդունում են, որ նա հանճարէ»: Լէօ, Մշակ, 1900, Թ. 74: